# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
## Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ
## WESTERN PRELACY
### OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
### H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: info@westernprelacy.org Website:www.westernprelacy.org




## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԷ ՕՐԷՆՃ ՔԱՈՒՆԹԻԻ Ս. ՔԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

Կիրակի, 4 Դեկտեմբերին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Օրէնճ Քաունթիի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցիին Ս. Պատարագին, եւ պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը:

Ս. Պատարագը պիտի մատուցանէ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ, Արժ. Տ. Հրանդ Ա․ Քհնյ. Երէցեան:

Պատարագէն ետք, Առաջնորդ Սրբազանը պաշտօնական բացումը պիտի կատարէ Արի Կիրակոս Մինասեան Ազգ. Վարժարանի Նոր Տարուան նուիրուած տօնավաճառին: Ձեռնարկը տեղի պիտի ունենայ եկեղեցւոյ կից «Ղուկասեան» սրահին մէջ:

### ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՀԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Չորեքշաբթի, 7 Դեկտեմբերը, Հայաստանի աղէտալի երկրաշարժի 23-րդ տարելիցն է: Այս առիթով, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ, Կիրակի, 4 Դեկտեմբերին, Ս. Պատարագի ընթացքին, «Տէր Ողորմեա»ի յատուկ աղօթք պիտի բարձրացուի անմեղ զոհերուն ի յիշատակ:

## PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT FORTY MARTYRS CHURCH IN ORANGE COUNTY

On Sunday, December 4, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy and deliver the sermon at Forty Martyrs Church in Orange County.

Divine Liturgy will be celebrated by Parish Pastor Archpriest Fr. Hrant Yeretzian.

Following the service, the Prelate will preside over the opening of the New Year and Christmas Boutique organized by A.G. Minassian School, which will be held at Gugasian Hall.

Wednesday, December 7th is the 23rd anniversary of the Armenia earthquake. On Sunday, December 4, "Der Voghormya" prayers will be offered in all Prelacy Churches in memory of the victims.

***

## ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ԱՆԻ» ՊԱՐԱԽՈՒՄԲԻ ՏԱՐԵԿԱՆ ԵԼՈՅԹԻՆ

Կիրակի, 4 Դեկտեմբերին, երեկոյեան ժամը 6-ին, Կլենտէյլ High School-ի հանդիսասրահին մէջ տեղի պիտի ունենայ Համազգային «Անի» պարախումբին տարեկան ելոյթը, ղեկավարութեամբ պարախումբի պարուսոյցեր՝ Սիւզի Բարսեղեան-Դարբինեանի եւ Եղիա Հաշըլեանի:

Ձեռնարկը նուիրուած է Հայաստանի Հանրապետութեան ժողովրդական դերասան, Մովսէս Խորենացիի շքանշանակիր Նորայր Մեհրապեանի ծննդեան 70-ամեակին:

Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ ելոյթին ու պիտի փոխանցէ իր շնորհաւորանքի խօսքը եւ օրհնութիւնները: Սրբազան Հօր պիտի ընկերանայ Քրեսենթա Հովիտի հոգեւոր հովիւը՝ Արժ. Տ. Ղեւոնդ Քհնյ. Քիրազեան:

## ANI DANCE COMPANY 37TH ANNUAL PERFORMANCE

On Sunday, December 4, the 37th annual performance of the Hamazkayin Ani Dance Company will take place at the Glendale High School Auditorium, led by instructors Suzy Barseghian-Tarpinian and Yeghia Hasholian.

This year's performance is dedicated to the 70th birthday of Armenian national artist Norayr Mehrabyan.

The Prelate will attend and convey his blessings. He will be accompanied by Crescenta Valley Church Pastor Rev. Fr. Ghevont Kirazian.

***

## ԹԵՄԻՍ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄԵՐՈՒ ՄԻՕՐԵԱՅ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Շաբաթ, 3 Դեկտեմբերին, Ս. Թադէոս եւ Ս. Բարթողոմէոս Առաքեալներու տօնին առթիւ, Թեմիս Կիրակնօրեայ Վարժարաններու ուսուցիչներու մասնակցութեամբ միօրեայ հաւաք մը տեղի պիտի ունենայ Շաբաթ 3 Դեկտեմբերին, Ազգային Առաջնորդարանի «Տիգրան եւ Զարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ:

Համագումարը կը վայելէ Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութիւնն ու ներկայութիւնը, եւ կազմակերպուած է Կիրակնօրեայ Վարժարաններու վարիչ մարմինին կողմէ:

Դասախօսն է Տիկին Նորա Շիթիլեան.ան ելոյթ պիտի ունենայ »Նոր սերունդի դաստիարակութիւնը եւ մտածելակերպը« նիւթով: Պիտի քննարկուի նաեւ յառաջիկայ տարուան աշխատանքային ծրագիրը:

## SEMINAR FOR SUNDAY SCHOOL TEACHERS TO BE HELD AT THE PRELACY

On Saturday, December 3rd, the Feast of St. Thaddeus and St. Bartholomew, a seminar will be held for Sunday School teachers at the Prelacy "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall.

The seminar is being held under the auspices of the Prelate and is organized by the Sunday Schools' Directorate. The Prelate will attend and convey his message.

Keynote speaker Mrs. Nora Chitilian will speak on the instruction and thought process of the new generation. The curriculum of the upcoming year will be also be discussed.

***

## HOSANNA BROADCASTING NETWORK-Ի ՏԱՐԵԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ

Կազմակերպութեան Hosanna Broadcasting Network-ի, Ուրբաթ, 2 Դեկտեմբերի առաւօտուն, տարեկան նախաճաշ-ձեռնարկը տեղի ունեցաւ Լոս Անճելըսի Westin պանդոկին մէջ, մասնակցութեամբ հոգեւորականներու:

Իրագործուեցաւ պաշտօնական յայտագիր եւ գեղարուեստական ծրագիր:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Աշոտ Քհնյ. Գամպուրեան ներկայ եղաւ ձեռնարկին եւ փոխանցեց Առաջնորդ Սրբազան Հօր ողջոյնի եւ օրհնութեան խօսքը:

## HOSANNA BROADCASTING NETWORK'S BREAKFAST WITH THE CLERGY

On the morning of Friday, December 2nd, the 5th annual "Breakfast with the Clergy" organized by the Hosanna Broadcasting Network was held at the Westin Hotel in Los Angeles.

This annual event is a time of thanksgiving, praise, and celebration, which features guest speakers, musical performances, and worship.

Holy Cross Cathedral Pastor Rev. Fr. Ashod Kamnourian attended and conveyed the Prelate's blessings and well wishes.

***